

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 47-րդ հոդվածի 7-րդ մասի, 61-րդ հոդվածի 7-րդ մասի, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 28-ի «Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստաձրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստաընկերությունների մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 23-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2018 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 77-Ա որոշումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հայտարարում է թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստաձրագրի եթերային հեռարձակման լիցենզավորման արտահերթ մրցույթ:

ՏԵՂԵԿՍՏՎՈՒԹՅՈՒՆ

Թվային հեռարձակման ցանցի միջոցով տարածքային սփռման, ընդհանուր ուղղվածության ու տվյալ տարածքի բնակչության հետաքրքրությունները բավարարող հեռուստաձրագրի եթերային հեռարձակման լիցենզավորման արտահերթ մրցույթի մասին

1. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը՝ թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստաձրագրի եթերային հեռարձակում:
2. Հեռուստաձրագրի թեմատիկ ուղղվածությունը՝ ընդհանուր ուղղվածության:
3. Սփռման տարածքը՝ ՀՀ Արագածոտնի մարզ:
4. Լիցենզիայի գործողության ժամկետը՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն լիցենզիայի գործողության ժամկետ է սահմանվում այն ամսաթիվը, որը նշված է ուժը կորցրած ճանաչված լիցենզիայում՝ մինչև 2021 թվականի հունվարի 20-ը:
5. Մրցույթի կազմակերպման և անցկացման ժամանակացույցը.
 - 1) Հայտերն ընդունվում են 2018 թվականի դեկտեմբերի 17-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 27-ը ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-18:00-ն: Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Հանձնաժողով՝ ՀՀ, ք. Երևան, Իսահակյան 28 հասցեով:
 - 2) մինչև 2018թ. դեկտեմբերի 29-ը Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում մրցույթի մասնակիցների ցանկի հրապարակում.
 - 3) 2019թ. հունվարի 8-ից սկսած Հանձնաժողովի դռնբաց նիստում մրցույթի մասնակիցների հայտերի և կից փաստաթղթերի հրապարակում.
 - 4) 2019թ. փետրվարի 22-ին լիցենզավորված անձի ընտրություն:
6. Անհրաժեշտ փաստաթղթեր՝
 - 1) ընկերության հիմնադիր փաստաթղթերի և իրավաբանական անձի կարգավիճակը հաստատող փաստաթղթերի պատճենները,
 - 2) հեռուստաընկերության բիզնես ծրագիրը,

- 3) տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների և սարքավորումների մասին,
 - 4) ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթերը,
 - 5) տեղեկություններ աշխատակազմի թվաքանակի, կրթության և մասնագիտական պատրաստվածության մասին,
 - 6) լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված 200 000 ՀՀ դրամ 900005164596 հաշվեհամարին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթի բնօրինակը:
7. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել (010) 52 94 06 հեռախոսահամարով կամ գրել licensing@tvradio.am էլ. փոստի հասցեով:
8. Հայտի ձևը`

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողովի նախագահ

_____ին
(անուն, ազգանուն)

ՀԱՅՏ

Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստաձրագրի եթերային
հեռարձակման լիցենզավորման մրցույթին մասնակցելու

Հայտատուի անվանումը _____

Գտնվելու վայրը _____

Հեռախոսահամարը, հասցեն _____

Հեռուստաձրագրի թեմատիկ ուղղվածությունը _____

Սփուման տարածքը _____

Տեղեկություններ հայտ ներկայացնողի` այլ հեռուստառադիոընկերության հիմնադիր և լիցենզավորված անձ կամ զանգվածային լրատվության այլ միջոցների հիմնադիր լինելու, ինչպես նաև դրանց արտադրությամբ և տարածմամբ զբաղվելու մասին

Սեփական արտադրության հաղորդումների ծավալը _____

Հայրենական արտադրության հաղորդումների ծավալը _____

Կից փաստաթղթեր` _____ թերթ:

Տնօրեն _____
(անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն)

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)

_____ (օրը, ամիսը, տարեթիվը)